Արձանագրություն N 3
«ՏԾԻԳ-ԲԸԾՁԲ-2016/1ՏՀ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» մայիսի2016թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գասպարյան

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Ք. Քաբաբյան)

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ	-	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ,Հեքիմյան 8ա,բն.23, E-mail: artstroad@mail.ru,
2.	«ՄԳ ՊՐՈՄԻԼ» ՍՊԸ	-	ՀՀ Արարատի մարզ, գ. Ջրաշեն, Գայի փող. տ. 1. E-mail: mgpromil@mail.ru
3.	ԱՁ «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ»	-	ՀՀ ք. Սևան Չարենցի 50ա, E-mail: gamshin5@gmail.com ,
4.	«Սահմանաշեն» ՍՊԸ	-	ՀՀ ք. Իջևան, Մայիսի 28-ի 41/41 E-mail: sahshen@mail.ru
5.	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	-	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս E-mail: info@haldi.am
6.	«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ	-	ՀՀ ք. Արմավիր Սայաթ-Նովա 122 շենք, E-mail: no_ona@mail.ru
7.	«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ	-	ք. Իջևան, Մետաղագործների 15/7 E-mail: miqnar@mail.ru

բ/ սահմանված ժամկետում, սակայն սահմանված կարգի պահանջներին անհամապատասխան հայտեր են ներկայացրել «Քարազարթ» ՍՊԸ-ն և «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն,

գ/ մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			Նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
		Գինն առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ	Ընդհանուր	
Չափաբաժին 1					
1					140 000
Չափաբաժին 2					
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	300000	60000	360000	400 000
Չափաբաժին 3					
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	620000	124000	744000	800 000

Չափաբաժին 4					
1					600 000
Չափաբաժին 5					
1	ԱՁ «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ»	6380000	1276000	7656000	9 600 000
2	«ՄԳ ՊՐՈՄԻԼ» ՍՊԸ*	9000000	------	9000000	
Չափաբաժին 6					
1	ԱՁ «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ»	328000	65600	393600	500 000
2	«Սահմանաշեն» ՍՊԸ	410000	82000	492000	
Չափաբաժին 7					
1	ԱՁ «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ»	328000	65600	393600	400 000
2	«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ*	390000	----	390000	
Չափաբաժին 8					
1	«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ	533500	----	533500	600 000
2	«Սահմանաշեն» ՍՊԸ	490000	98000	588000	
Չափաբաժին 9					
1	«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ*	73700	----	73700	100 000
2	«Սահմանաշեն» ՍՊԸ	80000	16000	96000	
Չափաբաժին 10					
1					1000 000
Չափաբաժին 11					
1	ԱՁ «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ»	187000	37400	224400	300 000
2	«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ*	290000	----	290000	
Չափաբաժին 12					
1	ԱՁ «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ»	88000	17600	105600	140 000
2	«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ*	130000	-----	130000	
Չափաբաժին 13					
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	1100000	220000	1320000	1 440 000
Չափաբաժին 14					
1					120 000
Չափաբաժին 15					
1	«ՄԳ ՊՐՈՄԻԼ» ՍՊԸ*	400000	-----	400000	440 000
2	«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ*	430000	-----	430000	
Չափաբաժին 16					
1	«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ*	390000	-----	390000	400 000
Չափաբաժին 17					
1	«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ	595000	119000	714000	740 000
Չափաբաժին 18					
1	«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ	770000	154000	924000	960 000
2	«ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ*	950000	-----	950000	

**Մասնակիցը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:*

դ/ «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից 9-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը չհիմնավորված ցածր է, քանի որ այն ցածր է գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից, համաձայն՝ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 47-րդ կետի 3)-րդ ենթակետի,

ե/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի, «ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ի, «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի, «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի և «Սահմանաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չեն համապատասխանում՝ «Քարազարթ» ՍՊԸ-ի, «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի, «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ» ԱՁ -ի և «ՄԳ ՊՐՈՄԻԼ» ՍՊԸ-ի ներկայացված հայտերը հետևյալ հիմնավորմամբ.

- «Քարազարթ» ՍՊԸ-ի և «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը սխալ են ներկայացվել www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով, ինչի հետևանքով կայքը թույլ չի տալիս բացել ներկայացված հայտերը,

- «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտի N 1, N 2, N 3.1 և N 4՝ (գնային առաջարկում) հավելվածներում նշված է «պարզեցված» ընթացակարգ, այնինչ սույն ընթացակարգը հանդիսանում է բաց ընթացակարգ, ինչպես նաև մասնակցի անվանումը բոլոր հավելվածներում, մասնավորապես՝ գնային առաջարկի և տուժանքի մասին համաձայնության կից ներկայացվող վճարման պահանջագրում նշված է ԱՁ «ԱՎԵՏԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ», մինչ դեռ իր անվանումը՝ ԱՁ «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ» է,

- «ՄԳ ՊՐՈՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված N «ՏԾԻԳ-ԲԸԾՁԲ-2016/1ՏՀ» տուժանքի մասին համաձայնության կից ներկայացված N 8 վճարման պահանջագրի մեջ նշվել է ներկայացման ամսաթիվ, ինչպես նաև անվանումը սխալ է նշվել, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի, «ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ի, «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի, «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի և «Սահմանաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

բ) «Քարազարթ» ՍՊԸ-ի և «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Անբավարար» և մերժել, քանի որ չեն համապատասխանում հայտերի կազմման և ներկայացման պայմաններին,

գ) «ԱՎԵՏԻՔ ԳԱԳԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ» ԱՁ -ի և «ՄԳ ՊՐՈՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Անբավարար» և մերժել, քանի որ չեն

համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, համաձայն՝ Կարգի 44-րդ կետի 4)-րդ ենթակետով և 45-րդ կետով սահմանված պահանջների:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա) առաջին տեղ զբաղեցնող ճանաչել.

- «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին՝ 2-րդ, 3-րդ և 13-րդ չափաբաժինների համար,

- «ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ին՝ 7-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների համար,

- «Սահմանաշեն» ՍՊԸ-ին՝ 6-րդ և 8-րդ չափաբաժինների համար,

- «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ին՝ 9-րդ չափաբաժնի համար,

- «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ին՝ 17-րդ և 18-րդ չափաբաժինների համար,

բ) երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել.

- «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ին՝ 8-րդ չափաբաժնի համար,

- «Սահմանաշեն» ՍՊԸ-ին՝ 9-րդ չափաբաժնի համար,

- «ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ին՝ 18-րդ չափաբաժնի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- սույն ընթացակարգի 1-ին, 4-րդ, 10-րդ և 14-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել, իսկ 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին,

- սույն կետում նշված չափաբաժինների համար հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը,

- առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ին առաջարկել նաև ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, քանի որ վերջինս ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ,

- փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ժամը 16:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Մ. Գասպարյան